

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 32/1

25 հունիսի 2013 թ.

Քննարկվեց «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՕՍԱԱՖ» ՀԿ-ի «Եղեգնաձորի Մարզատեխնիկական Ակումբ» ՍՊԸ 14.06.2013 թ-ի թիվ 7 գանգատը «ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ 24.05.2013 թ. թիվ 1008472 ստուգման ակտի դեմ:

Համաձայն «ԿԱ ՊԵԿ նախագահի 13.03.2013 թ-ի թիվ 1008472 հանձնարարագրի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՕՍԱԱՖ» ՀԿ-ի «Եղեգնաձորի Մարզատեխնիկական Ակումբ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող «Եղեգնաձորի օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության լուծարային ստուգում: Արդյունքում կազմվել է «ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ 24.05.2013 թ-ի թիվ 1008472 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով շահութահարկի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 2.845.377 դրամ:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՕՍԱԱՖ» ՀԿ-ի «Եղեգնաձորի Մարզատեխնիկական Ակումբ» ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

Ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1 հոդվածի պահանջներով բողոքարկում ենք «ԿԱ ՊԵԿ նախագահի 13.03.2013 թ-ի թիվ 1008472 հանձնարարագրի հիմքով ընկերությունում ստուգող տեսուչների գործողությունները և ստուգման արդյունքներով 24.05.2013 թ-ին կազմված թիվ 1008472 ակտը հետևյալ հիմնավորումներով:

Ստուգման ակտով ընկերությանն առաջադրվել է «ԿԱ ՊԵԿ պետական բյուջե վճարել 2.845.377 դրամ որպես շահութահարկ: Նշված գումարի առաջացումը, ըստ ստուգող տեսուչների, 2011 թ-ի և 2012 թ-ի գույքի իրացումից հասույթի թաքցնումն է: Այսպես, 2011 թ-ին իրացվել է հիմնական միջոց 2.302.000 դրամի չափով, որի շահութահարկը կազմել է 460.400 դրամ: 2012 թ-ին կրկին 6.465.172 դրամ արժեքով իրացվել է հիմնական միջոց, որի շահութահարկը կազմել է 1128674 դրամ:

Վերը նշված օտարված հիմնական միջոցների սեփականատեր է հադիսացել «ԿԱ ՊԵԿ Պաշտպանական մարզատեխնիկական ընկերություն» ՀԿ-ն, որն էլ իրացված հիմնական միջոցների համար՝ 2011 թ-ի հունիսի 17-ին կնքել է անշարժ գույքի առքուվաճառքի պայմանագիր, վավերացված նոտարական կարգով: Իր հերթին, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՕՍԱԱՖ» Համահայկական Հայրենասիրական ՀԿ-ն 2012 թ-ի հունիսի 12-ին կնքել է անշարժ գույքի առքուվաճառքի պայմանագիր և դուրս է գրել հատուկ հարկային թիվ Ա1196755586 և Ա4909224779 հաշիվները: Այնուհետև նշված հասույթներն արտացոլվել են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՕՍԱԱՖ» Համահայկական Հայրենասիրական ՀԿ-ի շահութահարկի հաշվարկներում և օրենքով սահմանված կարգով և ժամկետներում պետական բյուջե է վճարվել շահութահարկի գումարը: Ստուգման ակտով առաջադրված շահութահարկի գումարը դեռևս 2012 թ-ին ամբողջովին վճարվել է վճարման պարտավորություն կրող «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՕՍԱԱՖ» Համահայկական Հայրենասիրական ՀԿ-ի կողմից:

Վերոգրյալով հաստատվում է այն փաստը, որ ստուգման ակտով առաջադրված արդեն իսկ կատարված պարտավորությունը չի կարող առաջադրվել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՕՍԱԱՖ» ՀԿ-ի «Եղեգնաձորի Մարզատեխնիկական Ակումբ» ՍՊԸ նկատմամբ:

Այսպիսով, ստուգման ակտը կազմվել է օրենքի խախտմամբ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջադրված շահութահարկի մասով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՕՍԱԱՖ» ՀԿ-ի

<Եղեգնաձորի Մարզատեխնիկական Ակումբ>> ՍՊԸ-ն չի կարող հանդիսանալ պարտավորություն կրող սուբյեկտ:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է օրենքով սահմանված կարգով չեղյալ համարել 24.05.2013 թ-ի թիվ 1008472 ստուգման ակտը:

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցիչների և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ընկերության կողմից 2011 թ-ի համար ներկայացված շահութահարկի հաշվարկով համախառն եկամտից նվազեցվող ծախսերն ավել են ցույց տրվել 2.302.000 դրամով (իրացված հիմնական միջոցների մնացորդային արժեքը) և նույն գումարի չափով պակասեցվել է նույն տարվա հարկվող շահույթը, որի շահութահարկի գումարը կազմում է 460.400 դրամ:

Ընկերության կողմից 2012 թ-ի համար ներկայացված շահութահարկի հաշվարկով համախառն եկամուտը պակաս է ցույց տրվել 6.465.172 դրամով (հիմնական միջոցների՝ շենքի և ավտոմեքենայի, իրացումից հասույթ), իսկ համախառն եկամտից նվազեցվող ծախսերը պակաս են ցույց տրվել 821.800 դրամով (ժամանակաշրջանի ծախսեր 784800 դրամ, շենքի մնացորդային արժեք 34.000 դրամ, ավտոմեքենայի մնացորդային արժեք՝ 3.000 դրամ):

Այսպիսով, վերը նշված սխալների արդյունքում ընկերության 2012 թ-ի հարկվող շահույթը պակաս է ցույց տրվել 5.643.372 դրամով, որի շահութահարկի գումարը կազմում է 1.128.674 դրամ:

Հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ և 27-րդ հոդվածների դրույթները, շահութահարկի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 2.845.377 դրամ:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ ստուգման ակտով շահութահարկի գծով լրացուցիչ պարտավորությունների առաջադրման համար հիմք է հանդիսացել հիմնական միջոցների օտարման հետ կապված գործարքներից բխող հարկային պարտավորությունների կատարման պարտականությունն ընկերությանը վերագրելու հանգամանքը:

Մասնավորապես, 17.06.2011 թ-ի առուվաճառքի պայմանագրի համաձայն, «Հ Պաշտպանական Մարզատեխնիկական Հասարակական կազմակերպությունը, ի դեմս կենտրոնական խորհրդի նախագահ Արտյուշա Թադևոսյանի, որի կողմից 09.06.2011 թ-ին տրված թիվ 02/75 լիազորագրով հանդես է եկել Շուշանիկ Աբրահամյանը (այսուհետ՝ Վաճառող), և Համլետ Բաբայանի (այսուհետ՝ Գնորդ) կնքել են պայմանագիր, ըստ որի Վաճառողը Գնորդին վաճառել է, իսկ Գնորդը, որպես սեփականություն, ձեռք է բերել վարչական շենք 227.20 հա, որը գտնվում է 0.0278 հա. հողի վրա, Եղեգնաձոր քաղաքի Արսենյան փողոցի թիվ 7/1 հասցեում (այսուհետ՝ Գույք): Վաճառքի արժեքը կազմել է 2.776.800 ՀՀ դրամ:

17.06.2011 թ-ի առուվաճառքի պայմանագրի երկրորդ կետի համաձայն. «Գույքը սեփականության իրավունքով պատկանում է վաճառողին, ինչը հաստատվում է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Եղեգնաձորի տարածքային ստորաբաժանման կողմից 06.06.2011 թ-ին տրված թիվ 2648393 սեփականության իրավունքի վկայականով»:

Իր հերթին, համաձայն 12.06.2012 թ-ի առուվաճառքի պայմանագրի, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՕՍԱՖ» Համահայկական Հայրենասիրական Հասարակական կազմակերպությունը, ի դեմս նախագահ Արտուշ Թադևոսյանի, որի կողմից 04.06.2012 թ-ին տրված թիվ 02/66 լիազորագրով հանդես է եկել Հայկ Հակոբյանը (այսուհետ՝ Վաճառող), և Համլետ Բաբայանի (այսուհետ՝ Գնորդ) կնքել են պայմանագիր, ըստ որի Վաճառողը Գնորդին վաճառել է, իսկ

Գնորդը գնել է ք.Եղեգնաձոր, Արսենյան թիվ 7 հասցեում գտնվող անշարժ գույքն ամբողջությամբ: Վաճառքի արժեքը կազմել է 6.365.200 ՀՀ դրամ:

12.06.2012 թ-ի առուվաճառքի պայմանագրի երրորդ կետի համաձայն, <Գույքը սեփականության իրավունքով պատկանում է վաճառողին՝ համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Եղեգնաձորի տարածքային ստորաբաժանման կողմից 06.06.2011 թ-ին տրված թիվ 2648392 սեփականության իրավունքի վկայականի>:

<հշատակված երկու պայմանագրերն էլ ՀՀ օրենսդրության համաձայն ստացել են նոտարական վարվերացում, իսկ նրանցից ծագող իրավունքները ենթարկվել են պետական գրանցման:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 561 հոդվածի. <Վաճառողը, անշարժ գույքի առուվաճառքի (այսուհետ՝ անշարժ գույքի վաճառքի) պայմանագրով պարտավորվում է գնորդի սեփականությանը հանձնել հողամաս, շենք, շինություն, բնակարան կամ այլ անշարժ գույք (հոդված 134)>, իսկ 562 հոդվածի՝ <1. Անշարժ գույքի վաճառքի պայմանագրով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը գնորդին ենթակա է պետական գրանցման: 2. Մինչև սեփականության իրավունքի փոխանցման պետական գրանցումն անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը կատարելը հիմք չէ այդ պայմանագրի կողմերի հետ երրորդ անձանց ունեցած հարաբերությունների փոփոխման համար>:

Քննարկվող դեպքում ստուգման ակտով վերը նշված անշարժ գույքերի վաճառքը վերագրվել է <<ԱՅԱՍՏԱՆԻ ԴՕՍԱԱՖ> ՀԿ-ի <Եղեգնաձորի Մարզատեխնիկական Ակումբ> ՍՊԸ-ին, այն դեպքում, երբ հիշատակված պայմանագրերով որպես վաճառողներ (գույքի սեփականատերեր) հանդես են եկել ՀՀ Պաշտպանական Մարզատեխնիկական Հասարակական Կազմակերպությունը և <ԱՅԱՍՏԱՆԻ ԴՕՍԱԱՖ> Համահայկական Հայրենասիրական Հասարակական Կազմակերպությունը:

Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ մատնանշված անշարժ գույքերը չեն պատկանել <<ԱՅԱՍՏԱՆԻ ԴՕՍԱԱՖ> ՀԿ-ի <Եղեգնաձորի Մարզատեխնիկական Ակումբ>> ՍՊԸ-ին, քանի որ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Եղեգնաձորի տարածքային ստորաբաժանման կողմից 06.06.2011 թ-ին տրված թիվ 2648393 և թիվ 2648392 սեփականության վկայականների համաձայն դրանք պատկանել են այլ կազմակերպությունների: Ընդ որում հարկ է նշել, որ 12.06.2012 թ-ի առուվաճառքի պայմանագրի գործարքի և օտարված ավտոմեքենայի գծով <<ԱՅԱՍՏԱՆԻ ԴՕՍԱԱՖ> Համահայկական Հայրենասիրական Հասարակական Կազմակերպության կողմից դուրս են գրվել հարկային հաշիվներ, իսկ գործարքներից բխող պարտավորություններն արտացոլվել են ՀՀ ԿԱ ՊԵԿ ներակայացված համապատասխան փաստաթղթերում:

Այսպիսով, հիշատակված գործարքներում <<ԱՅԱՍՏԱՆԻ ԴՕՍԱԱՖ> ՀԿ-ի <Եղեգնաձորի Մարզատեխնիկական Ակումբ> ՍՊԸ-ն չէր կարող հանդես գալ որպես գործարքի կողմ (վաճառող) և կրել դրանցից բխող հարկային պարտավորությունները:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ 24.05.2013 թ-ի թիվ 1008472 ստուգման ակտի 1-ին կետը:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ